ԱՐԵՎԵԼՅԱՆ ԴՐԱՄՆԵՐԻ ԳԱՆՁԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ VIII—X ԴԱՐԵՐՈՒՄ

Պատմ. գիտ. դոկտոր Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Հայաստանում և հարևան երկրներում գտնված դրամական գանձերը հանդիսանում են հնուց մնացած այն իրեղեն ապացույցները, որոնց ծագման ու շրջանառության տվյալները հնարավորություն են ընձեռում դատելու ապրանքափոխանակության ոլորտում երկրի ունեցած միջազգային կապերի հիմնական ուղղությունների մասին։

Դրամական շրջանառության ներքին ոլորտի համար կարևոր տվյալներ են ներկայացնում պղնձե դրամները, որոնք գործառական նշանակություն են ունեցել առավելապես տեղական շուկայի առևտրի մեջ։ Այդ առումով ուշագրավ են դրամական միավորների երկու խմբեր։ Դրանցից մեկը Դվինի ավերակներում ի հայտ եկած Օմայան պղնձե դրամների այն նմուշներն են, որոնք թողարկվել են տեղում՝ Հայաստանի գլխավոր քաղաք Դվինում և սպասարկել են քաղաքային շուկայի մանր ապրանքափոխանակության ներքին պահանջները։ Հայաստանի սահմաններից դուրս տեղական կտրվածքի այդ դրամները տարածում չեն ունեցել։ Հայաստանում գտնված և VIII դարին վերաբերող դրամների երկրորդ խումբը՝ Արաբական խալիֆայության կենտրոնական նահանգներում, մասնավորապես Սիրիայում և Իրաքում թողարկված Օմայան արծաթե և պղնձե դրամներն են։ Վերջիններս ըստ ծագման թողարկվել են Հիմս (Եդեսիա)[2], Դամասկոս[3], Կիննասարին[4] քաղաքներում։ Ի տարբերություն տեղական դրամների, այս երկրորդ խմբի դրամները քանակապես դեռևս շատ չեն և հաղիվ նշմարելի չափով կարող են վկայել դրամական շրջանառության ոլորտում հայկական շուկաների կապը սիրիական քաղաքների հետ։ Բացառված չէ, որ Սիրիայից և Ջազիրայից Հայաստան եկած քարավանների միջոցով այդօրինակ պղնձե դրամները (ֆելսերը) կարող էին թափանցել Դվինի, ինչպես նաև հայկական այլ շուկաները։

Առավել որոշակի վկայություն է ներկայացնում Ապարանի Շենավան գյուղում 1957 թ. գտնված Օմայան արծաթե դրամներից բաղկացած գանձը[5], նորագույն դրամը պատկանում է հիջրայի 119 թ., այսինքն՝ մ. թ. 737 թ.։ Հավանաբար, գանձը հողին է հանձնվել VIII դարի 40—50-ական թթ.։ Այլ կերպ ասած՝ գանձի դրամները գործառական նշանակություն են ունեցել VIII դարի առաջին կեսին։

---

1 Х. А. Мушегян, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962, էջ 61, № 12—19 (այսուհետև՝ Мушегян).

2 Հայաստանի պատմության պետական թանգարան, № 10678 (այսուհետև՝ ՀՊԹ)։

3 Նույն տեղում, № 11210, 11995։

4 Նույն տեղում, № 12395։

5 Նույն տեղում, № 17130։

Քննությունը պարզել է, որ այդ գանձից մնացած արծաթե 13 դիրհեմներից 11-ը դրվագվել են Վասիտ քաղաքում, իսկ երկուսը՝ Քերման և Սուկ Մին-ալ-Ահվազ քաղաքներում։ Իրաքի նշանավոր Վասիտ քաղաքը, որ գտնվում է Պարսից ծոցի մոտ, խալիֆայության արծաթե դրամների թողարկման ամենակարևոր կենտրոններից մեկն էր Օմայանների տիրակալության մեջ, և Շենավանի գանձը, լինելով VIII դարին պատկանող գանձերից վաղագույնը Անդրկովկասում, ցույց է տալիս, որ VIII դարի առաջին կեսին Հայաստանում տարածված են եղել առավելապես Վասիտում դրվագված Օմայան արծաթե դրամները։ Ինչ վերաբերում է Քերման և Սուկ ալ-Ահվազ քաղաքներում թողարկված դրամներին, որոնք Շենավանի գանձում առկա են մեկական օրինակներով, ապա դրանք Հայաստանում հազվագյուտ են։ Այն իրողությունը, որ Վասիտում թողարկված Օմայան արծաթե դրամները նշանակալից տարածում են ունեցել խալիֆայության կովկասյան շրջաններում, երևում է ինչպես Հայաստանում, այնպես էլ հարևան երկրներում գտնված դրամագիտական այլ նյութերից։ Շենավանի գանձի մեկ անգամ ևս հաստատում է, որ Հայաստանում VIII դարի առաջին կեսին դրանք պատահական չեն[6]։

Դրամական շրջանառության ոլորտում Հայաստանի միջազգային կապերն առավել տեսանելի ուրվագծվում են VIII դարի երկրորդ կեսից սկսած։ Հիմնական տվյալներն ի հայտ են գալիս Հայաստանում գտնված աբբասյան դրամների ու դրամական գանձերի քննությամբ։ Անմիջական կապերը դիտվում են նախ և առաջ Աղվանքի հետ։ Պարտավում դրվագված VIII դարի երկրորդ կեսի աբբասյան պղնձե դրամները լայն տարածում են ունեցել Դվինում, ուր պեղումների ընթացքում ի հայտ են եկել հիջրայի 142 (759/60), 143 (760/61), 159 (775/76), 163 (779/80) և 164 (780/81) թթ. թողարկված ֆելսերի բազմաթիվ նմուշներ։ Արաբատառ արձանագրությամբ դրանց բոլորի վրա հիշատակված է Աղվանքի գլխավոր քաղաք Պարտավի անվան արաբերեն ձևը՝ Բարդաա։ Հայաստան—Աղվանք կապերի մասին են վկայում նաև Դվինի կենտրոնական թաղամասի պեղումներից հայտնաբերված ալ-Յազիդիա և ալ-Բար (Դերբենդ) քաղաքների աբբասյան պղնձե դրամները՝ թողարկված VIII դարի երկրորդ կեսին[8], ինչպես նաև Դվինում գտնված, բայց Աղվանքում թողարկված հիջրայի 153 (770), 177 (793/94) և 178 (794/95) տարեթվերով աբբասյան պղնձե դրամները[9]։ Եթե նկատի ունենանք, որ պղնձե դրամները չէին մտնում արտաքին առևտրի ոլորտը, որ դրանք բնորոշ էին տեղական շուկայի մանրածախ առևտրին, ապա հարկ է ենթադրել, որ Հայաստան—Աղվանք կապերը դրամական շրջանառության ոլորտում զարգացել են անմիջականորեն։ Դա միանգամայն օրինաչափ երևույթ էր, որովհետև Արաբական խալիֆայության վարչական բաժանմամբ Հայաստանը և Աղվանքը մտնում էին մեկ նահանգի մեջ, ըստ որում նրանցում դրվագվող պղնձե

---

6 Мушегян, էջ 60, №№ 8—9։

7 ՀՊԲ, №№ 11146, 11147, 11207, 14683, 11197, 13841, 3087, Мушегян, էջ 29, 34, 535։

8 Նույն տեղում, №№ 11523, 12738։

9 Նույն տեղում, №№ 3090, 3096, 3100, 3155, 10841, 11149, 11199, 11206, 123226։

դրամները սպասարկում էին ներքին շուկային, որի սահմաններից դուրս սովորաբար չէին անցնում։

Դրամական շրջանառության ներքին ոլորտին բնորոշ Հայաստան—Աղվանք կապերի անմիջականության մասին փաստող հիշյալ տվյալները միաժամանակ ընդգծում են պղնձե դրամների նշանակությունը VIII դարի վերջին։ Հենց այս ժամանակներում էր, որ Արմինիա նահանգի կառավարման գործում բարձրացել էր Պարտավ քաղաքի դերը, ուր փոխադրվել էր աբբասյանների դիվանատունը[10]։ Ըստ էության կուր-արաքսյան միջագետքի տնտեսական կյանքի խոշոր կենտրոնները VIII—IX դդ. եղել են Դվին և Պարտավ քաղաքները, որոնց փողերանոցներում դրվագվող աբբասյան պղնձե դրամները նշանակալից տարածում էին ստացել հայկական շուկաներում։ Այդ են վկայում Անդրկովկասով անցնող քարավանային ապրանքափոխանակության ասպարեզում Պարտավի[11] կարևոր դերի մասին եղած մատենագրական տեղեկությունները, ինչպես նաև Դվին քաղաքի պեղածո նյութերը, որոնք բնորոշ են միջնադարի ապրանքային արտադրության այդ խոշոր կենտրոնին[12]։

Պարտավ և Դվին քաղաքների ապրանքադրամական կապերի անմիջականության մասին են վկայում նաև երկու դրամական գանձեր, բաղկացած VIII դարի վերջին և IX դարի սկզբին պատկանող աբբասյան պղնձե դրամներից, որոնք գտնվել են Դվինի պեղումների ժամանակ։ Դրանք պարունակում են բացառապես Դվինում և Պարտավում թողարկված ֆելսերի առանձին նմուշներ, որոնք հիշատակում են աբբասյան վաղ ժամանակներում Հայաստանում և Աղվանքում իշխող ոստիկանների անունները։ Այդ գանձերից մեկը ներկայացնում է ոստիկանների կողմից թողարկված հետևյալ տարեթվերի դրամները[13].

184 (800) թ. Ասադ Իբն Յազիդ	11	դրամ
186 (802) թ. Մուհամեդ Իբն Յազիդ	1	»
186 (802) թ. Խուզայմա Իբն Խազիմ . . .	1	»
208 (823/24) թ. Խալիֆ ալ-Մամուն	14	»
208 (823/24) թ. Մուհամմեդ իբն Սալիմ . . .	1	»
անորոշ	1	»

Պղնձե դրամների երկրորդ գանձը նույնպես պարունակում է Հայաստանում և Աղվանքում թողարկված հետևյալ տարեթվերի, տեղական ոստիկանների անուններով ֆելսեր[14].

---

10 Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 254։

11 В. В. Бартольд, Историко-географический очерк Ирана. СПб., 1903, էջ 151։

12 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, I, Երևան, 1952։

13 ՀՊԹ, № 17498։ Գանձը գտնվել է Դվինի կենտրոնական թաղամասի մոտ, այժմ Հնարերդ կոչվող գյուղի հանգում, 1956 թ.։

14 ՀՊԹ, № 17600։ Գանձը գտնվել է Դվինի ավերակներում, այժմ Հողաբերդ գյուղի հանդում, 1958 թ.։

177 (793/94) թ. խալիդ Իբն Յազիդ	1 դրամ
ջնջված տարեթվով, Ասադ Իբն Յազիդ . . .	3 »
187 (802/03) թ. Խազիմ Իբն Խուզայմա . . .	3 »
208 (823/24 թ. խալիֆ ալ-Մամուն	5 »
ջնջված տարեթվերով և անուններով	10 »

Դվինում գտնված այս երկու գանձերն էլ ներկայացնում են զուտ տեղական շուկայի նեղ ոլորտին բնորոշ աբբասյան պղնձե դրամներ։ Հարևան արաբական և իրանական երկրներից եկած պղնձե դրամներ այս գանձերում չկան։ Հատուկենտ օրինակներով տեղական կերտվածքի աբբասյան նույնանման ֆելսեր հաճախ են հայտնաբերվում կուր-արաքսյան միջագետքի հնավայրերում։ Սակայն Անդրկովկասից դուրս այդօրինակ ֆելսերը հազվագյուտ են։ Եվ դա պատահական չէ, որովհետև արտաքին առևտրում այդպիսի դրամները լայն տարածում չեն ունեցել։ Դրանք ևս որոշակիորեն փաստում են Հայաստանի ու Աղվանքի միջև եղած ապրանքադրամական հարաբերությունների անմիջականությունը շրջանառության ներքին ոլորտում։ Տեղական կերտվածքի աբբասյան պղնձե այդ ֆելսերի շրջանառությունը հայկական և աղվանական շուկաներում կատարվել է, ամենայն հավանականությամբ, ոչ միայն դրանց թողարկման տարիներին՝ VIII դարի վերջին և IX դարի առաջին քառորդում, այլ շարունակվել է նաև հետագայում, Աբբասյանների տիրակալության ողջ ժամանակաշրջանում։ Բացառված չէ, որ առաջիկայում Պարտավի հնագիտական պեղումներից ի հայտ գան ինչպես տեղական, այնպես էլ Դվինում թողարկված աբբասյան պղնձե դրամներ, որոնք հավասարապես ընդունելի էին տեղական շուկայում։

Միջազգային ապրանքափոխանակության համար կարևոր էին արծաթե դրամները։ Այդ առումով անհրաժեշտ է պարզել, թե Արևելյան խալիֆայության ստեղծման վաղ ժամանակից, այսինքն՝ VIII դարի երկրորդ կեսից մինչև Արևելքում այսպես կոչված «արծաթի ճգնաժամի» սկսվելը, այլ կերպ ասած՝ մինչև X դարի վերջը, Հայաստանում ինչպիսի՞ արծաթե դրամներ են շրջանառության մեջ եղել և այդ դրամներն իրենց ծագման աշխարհագրական ու ժամանակագրական տվյալներով ինչպիսի՞ տեղեկություններ են տալիս երկրի միջազգային կապերի հիմնական ուղղությունների մասին։

Ըստ էության, աբբասյան արծաթե դրամների հայտնաբերումները զանգվածային բնույթ են կրում։ Դրամագյուտերը ցույց են տալիս, որ, ի տարբերություն վաղ արաբական ժամանակների, VIII դարի երրորդ քառորդից սկսած աբբասյան դիրհեմների շրջանառության ոլորտը մեծապես ընդլայնվել էր։ Աբբասյանների տիրակալության հսկայական տարածքի վրա (Միջին Ասիայից մինչև Միջերկրականի աֆրիկյան ափերը) ծավալվել էր միջազգային ապրանքափոխանակությունը։ Սակայն ի՞նչ բնորոշ տվյալներ է ներկայացնում Հայաստանի դրամական շրջանառությունը և արտաքին առևտրի շնորհիվ դրսից բերված ինչպիսի՞ դրամներ են տարածվել հայկական շուկաներում։

Այս հարցերին պատասխանելու համար նախ և առաջ հարկ է նկատի ունենալ, որ իր աշխարհագրական դիրքով Արմինիա նահանգը կարևոր ռազմաստրատեգիական և տնտեսական նշանակություն ուներ Արևելյան խալիֆայության համար։ Նրա միջով անցնում էին դեպի սլավոնական երկրների շուկաները տանող բարավանային առևտրի ճանապարհները։ Անդրկովկասի

(հատկապես կուր-արաքսյան միջագետքի) ապրանքային արտադրության ամենանշանավոր կենտրոնները, ինչպես նաև բուն Հայաստանի հարավային շրջաններն ընդգրկված էին խալիֆայության Արմինիա նահանգի մեջ[15]։ Հաշվի առնելով այդ նահանգի՝ որպես մեկ վարչական միավորի պատմական նշանակությունը խալիֆայության համար, անհրաժեշտ է քննության առնել այն դրամական գանձերը, որոնք հայտնաբերվել են Արմինիայի հայկական, վրացական և ադվանական շրջաններում։ Դրամագիտական նյութերի քննության այդ սկզբունքով միայն հնարավոր է բացահայտել Հայաստանի դրամական շրջանառության զարգացման և նրա առևտրական կապերի տվյալները։

Արմինիա նահանգում գտնված և Աբբասյանների տիրակալության ժամանակներին վերաբերող արծաթե դրամական գանձերից վաղագույնը պատկանում է VIII դարի երրորդ քառորդին։ Այն հայտնաբերվել է նախկին Գանձակ քաղաքի (այժմ Կիրովաբադ) մոտ։ Գանձի պարունակությունից պահպանված 187 արծաթե դրամներից նորագույնը թողարկվել է հիջրայի 155 (771/72) թ.։ Հենց այդ տարիներից էլ դիտվում է ապրանքափոխանակության պահանջով խալիֆայության արաբական և իրանական երկրամասերից դուրս եկած արծաթե օմայան ու աբբասյան դիրհեմների համատեղ շրջանառությունը հայկական, ադվանական ու վրացական շուկաներում։ Սկզբում քանակական գերակշռությունը մնում էր դեռևս օմայան դրամների կողմը, սակայն նոր թողարկվող աբբասյան դրամների հոսանքը ընալով զորեղանում է և, ի վերջո, դառնում տիրապետող։ Միջազգային առևտուրը Հայաստան է բերում արծաթ դրամներ Իրաքի, Սիրիայի, Ջազիրայի, Խուզիստանի, Ջեբալի և այլ երկրամասերի վաճառաշահ քաղաքներից։ Այդ են վկայում Մարտունիում[16], Կարյագինոյում[17], Թոուզում[18], Սավանայում[19] և Անդրկովասի այլ վայրերում գտնված դրամական գանձերը, որոնք բոլորն էլ ներկայացնում են

---

15 Խալիֆայության Արմինիա նահանգը միջնադարի արաբ պատմիչների մոտ հիշատակվում է որպես մի քանի շրջաններ ընդգրկող երկրամաս։ Այսպես, օրինակ, ըստ ալ-Բալազուրիի Արմինիան բաժանված է եղել չորս մասերի, որոնցից Սյունիքը և Ադվանքը միասին կազմել են այսպես կոչված Առաջին Արմինիան։ Վրաստանի արևելյան մասը ներկայացվել է որպես երկրորդ Արմինիա։ Վասպուրականը, Դվինը, Շիրակ-Տայքը և Բագրևանդը միասին դիտվել են որպես երրորդ Արմինիա, իսկ Արշամաշատը, Կարինը, Խլաթը, Արձեշն ու Ապահունիքը չորրորդ Արմինիա։ Մեկ ուրիշ տեղեկությամբ ալ-Բալազուրին Արմինիա նահանգի ստորաբաժանումները հիշատակում է նաև տարբեր շրջանների միավորումներով, ըստ որի առաջին Արմինիան իր մեջ ընդգրկում է Սյունիքը, Ադվանքը և Թիֆլիսը, երկրորդ Արմինիան՝ Կարինը, Խլաթը, Արձեշը և Ապահունիքը (Բաջունայս)։ Երրորդ Արմինիան՝ Շիրակը, Տայքը, Բագրևանդը, Դվինը և Վասպուրականը, չորրորդ Արմինիան՝ Արշամաշատը (Շիմշատ)։ Տե՛ս ал-Беладзори, Из книги Завоевание стран, «Материалы по истории Азербайджана», вып. III, текст и перевод проф. П. К. Жузе, Баку, 1927, էջ 9։ С. Шлепчян, Административная политика Арабского халифата в Армении в VII—IX вв., Ереван, 1955, էջ 9—10։ (Автореферат диссертации); А. М. Шахназарян, Двин. Историко-географический очерк, Ереван, 1940, էջ 78։

16 ՀՊԹ, № 14516։

17 Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана..., вып. I—IX, Баку, 1926—1966, № 386 (այսուհետև՝ ПМК).

18 Նույն տեղում, № 388։

19 Н. Л. Джалагания, Монетные клады Грузии, I, Тбилиси, 1975, էջ 24—35 (այսուհետև՝ Джалагания)։

VIII դարի վերջին շրջանառության մեջ եղած դրամական միավորներին բնորոշ տվյալները[20]։

Հետագայում դրսից եկող դրամների հոսքը դիտվում է IX դարի դրամական գանձերի տվյալներով։ Աբբասյան դրամներն առավել լայն տարածում են ստանում։ Ապրանքային արտադրության և միջազգային առևտրի զարգացման հետ կապված Հայաստան են թափանցում ոչ միայն Իրաքի, Սիրիայի, Ջազիրայի, Ջեբալի ու Սեջիստանի քաղաքներում դրվագված արծաթե դրամները, այլև Աֆրիկայի հյուսիսային մասերում, անգամ Իսպանիայում ու Միջին Ասիայում թողարկված աբբասյան դիրհեմները։ Վերջիններիս թափանցումը խալիֆայության կովկասյան շրջանները և տարածումը հայկական. աղվանական ու վրացական շուկաներում կատարվում էր, հավանաբար, ոչ անմիջականորեն, այլ տարբեր շուկաների հետ ունեցած առնչություններով։ Սակայն բացառված չէ, որ առանձին դեպքերում օտար երկրներում դրվագված արծաթե աբբասյան դրամները կարող էին բերվել Հայաստան նաև անմիջական կապերի շնորհիվ։ Հիշենք, որ ապրանքային արտադրության հայկական շրջանները դեռևս մինչև աբբասյան դրամների թողարկումը կապված են եղել Մերձավոր Արևելքի արաբական և իրանական քաղաքների հետ։

Ուշագրավ է, որ IX դարում Հայաստանում, ինչպես և հարևան երկրներում, աբբասյան դրամների հետ շրջանառության մեջ գործառական նշանակություն են ունեցել հնուց մնացած սասանյան դրախմաները և դրանց ընդօրինակությամբ թողարկված այսպես կոչված արաբա-սասանյան արծաթ դրամները։ Պարզված է, որ IX դարի սկզբին Աղվանքում թաղված դրամական գանձում աբբասյան դրամների հետ եղել են նաև սասանյան Խոսրով II Փարվեզի (590—628) պատկերով և պահլավերեն ՆԱԽ, ինչպես նաև ՆԱՌ գրերով երկու դրախմաներ[21]։ Վրաստանում (Թելավի շրջանի Փշավելի գյուղում), նույնպես IX դարի սկզբին թաղված գանձում, աբբասյան դրամներից բացի եղել են սասանյան և արաբա-սասանյան դրամներ[22]։ Հայաստանում, մասնավորապես Դառնիում գտնված, IX դարի առաջին քառորդին պատկանող դրամական գանձում աբբասյան դրախմաներից բացի եղել են նաև Սասանյան Խոսրով II Փարվեզի և Իրանի Օմայան նահանգապետ Ուբեյդալլահ իբն Զիյադի հիջրայի 62 (681—682) թ., ինչպես նաև Թաբարստանի Աբբասյան կուսակալ Օմար իբն-ալ Ալայի (տեղական տոմարի 128= մ. թ. 779) արծաթ դրամները։ Դառնիի այդ նույն գանձում ի հայտ են եկել արաբական խալիֆայության հետռեֆորմյան դրամներից այնպիսի միավորներ, որոնք դրվագվել են Օմայան խալիֆաներ Աբդ ալ-Մելիքի, Վալիդ II-ի և Հիշամի գահակալության տարիներին[23]։ Այդ է վկայում նաև Սևանի ափին, Մարտունու շրջկենտրոնում գտնված IX դարի երրորդ քառորդին պատկանող գանձը, որի մեջ աբբասյան դրամների հետ միասին եղել են Իրանի օմայան կուսակալ Զիյադ իբն Աբու Սուֆյանի անունով հիջրայի 41—55 (661—675) թթ. դրվագված երկու արծաթե դրամներ, ինչպես նաև Թաբարստանի աբբասյան նահանգապետ Օմար իբն ալ-Ալայի իշխանության տարիներին, տեղական տո-

20 Мушегян, 39.
21 ПМК, II, № 391.
22 Джалагания, էջ 35—36։
23 ՀՊԹ, № 7200—7728, 8274—8309։

մարի 132 թ. (մ. թ. 783/84 թթ.) դրվագված մեկ հատ կես դրախմանոց[24]։ Սակայն վաղուց իրենց դարն ապրած ինչպես սասանյան և արաբա-սասանյան, այնպես էլ օտարյան արծաթե դրամները IX դարի ընթացքում գնալով սպառվում էին։ Արմինիայի տարածքի վրա հայտնաբերված IX դարի գանձերը հստակորեն արտահայտում են այդ փոփոխությունը։ Բերենք մի քանի օրինակ.

Գանձի հայտնաբերման տեղը և ժամանակը	Գանձում եղած նորագույն դրամի տարեթիվը	Գանձում հավաքված դրամների տեսակները հատերով					
		Սասանյան	Արաբա-սասանյան	Դեռաբյան	Աբբասյան	Իբրահիմյան	Ագլաբյան
Աղդամ, Ադր. ՍՍՀ, 1934 թ.	188 (803/04) թ.	2	5	2	49	1	1
Փշավելի, Վրաց. ՍՍՀ, Թելավի շրջան, 1937 թ.	192 (807/08) թ.	1	1	5	118	2	—
Կավշիրի, Վրաց. ՍՍՀ, Լագոդեխիի շրջան, 1921 թ.	204 (819/20) թ.	1	1	7	29	—	—
Գառնի, Հայկ. ՍՍՀ, Աբովյանի շրջան, 1930 թ.	207 (822/23) թ.	1	3	4	47	—	—
Ապենի, Վրաց. ՍՍՀ, Լոդաղեխիի շրջան, 1924 թ.	218 (833/34) թ.	16	24	30	322	—	—
Մինդեչաուր, Ադր. ՍՍՀ, Խալդանի շրջան, 1948 թ.	258 (871/72) թ.	—	—	1	23	—	—

Հին թողարկման դրամների առկայությունը նորերի հետ և նրանց գործառական նշանակությունը փոխանակության պրոցեսում բնորոշ է եղել ոչ միայն Արևելքի երկրների դրամական տնտեսությանը, այլև Եվրոպայի երկրներին։ Հաշվի էին առնվում նախ և առաջ ազնիվ մետաղի պարունակության կշռային չափերը։ Միջազգային շուկաներում հանդիպող այլալեզու վաճառականներին անհրաժեշտ էր հավաստիանալ արծաթի կամ ոսկու զտության մասին, իսկ թե ինչ պատկերներով ու գրություններով էին օժտված ներկայացվող դրամները, դա հարցի ձևական կողմն էր։

Չնայած հնուց մնացած դրամների առկայությանը դրամական շրջանառության մեջ, որոշակի է այն իրողությունը, որ Հայաստանում և հարևան երկրներում IX դարի ընթացքում լայնորեն տարածված արծաթե դրամները (որոնք ընդհանրապես միջազգային նշանակություն ունեին արտաքին ու ներքին առևտրի մեջ) Արաբական խալիֆայության Աբբասյան դինաստիայի դիրհեմներ են եղել։ Նկատենք, որ IX դարի առաջին իսկ տարիներից մինչև նրա ավարտը շրջանառության մեջ եղած արծաթե դրամների գերակշռող մասը կազմված է եղել VIII դարի վերջին և IX դարի սկզբին թողարկված աբբասյան դիրհեմներից։ Անգամ IX դարի վերջին տարիներին պատկանող գանձերը բաղկացած են վաղ աբբասյան ժամանակներում թողարկված դրամներից։ Ըստ էության Աբբասյան առաջին հինգ խալիֆաների օրոք ավելի շատ արծաթ

24 ՀՊԹ, № 17749—17758։

դրամներ են բաց թողնվել շրջանառության մեջ, քան նրանց հաջորդների տարիներին։ Այդ հետևությանը կարելի է հանգել ոչ միայն Հայաստանից դուրս գտնված դանձերի քննության տվյալներով, այլև բուն Հայաստանում գտնված նյութերի հիման վրա։ Իբրև օրինակ բնորոշ է IX դարի առաջին կեսին պատկանող արծաթ դրամներից բաղկացած գանձը, որ գտնված է Գառնիում[25]։ Այստեղ շրջանառության մեջ եղած աբբասյան դրամները թողարկվել են հետևյալ խալիֆաների գահակալության տարիներին.

ալ-Մանսուր (136—158=754—775)	11	դրամ
ալ-Մահդի (158—169=775—785)	12	»
առ-Ռաշիդ (170—193=786—809)	17	»
ալ-Ամին (193—218=813—833)	8	»
ալ-Մամուն (198—218=813—833)	3	»

Գրեթե նույն ժամանակագրական տվյալներն են ներկայացնում Սևանի ափին, Հայկական ՍՍՀ Մարտունու շրջկենտրոնում 1961 թ. գտնված, IX դարի երկրորդ կեսին վերաբերող գանձի դրամները, որոնք թողարկվել են հետևյալ խալիֆաների գահակալության տարիներին[26].

ալ-Մանսուր (136—158=754—775)	4	դրամ
ալ-Մահդի (158—169=775—785)	6	»
ալ-Հադի (169—170=785—786)	1	»
առ-Ռաշիդ (170—193=786—809)	37	»
ալ-Մամուն (195—218=810—833)	3	»
ալ-Մուտասիմ (218—227=833—824)	5	»
ալ-Վասիկ (227—232=842—847)	2	»
ալ-Մութավաքիլ (232—247=847—861)	14	»

Ինչպես տեսնում ենք, IX դարի 60-ական թթ. անգամ գործառական նշանակություն են ունեցել առավելապես Հարուն ալ-Ռաշիդի և նրա նախորդների դիրհեմները, որոնք շրջանառության մեջ են եղել նոր թողարկված արծաթ դրամների հետ մեկտեղ։

Դրամական տնտեսության այսպիսի վիճակի մասին են վկայում Արմինիայի հայկական, աղվանական և վրացական շրջաններում հայտնաբերված գրեթե բոլոր դրամական դանձերը։ Վերջիններիս պարունակության տվյալներից երևում է, որ IX դարի ողջ ընթացքում Հայաստանը և հարևան երկրներն ընդգրկված են եղել Արաբական խալիֆայության ներքին առևտրի ոլորտը, որ ապրանքադրամական հարաբերությունների զարգացման շնորհիվ հայկական շուկաներն են թափանցել Բաղդադում, Բասրայում, ալ-Քուֆայում, Վասիտում, ինչպես նաև Մուհամեդիա (Ռեյ), Իսպահան և այլ քաղաքներում թողարկված արծաթ դրամներ։

Արևելքի արաբական և իրանական երկրամասերից, հատկապես Իրաքից, Սիրիայից, Ջազիրայից, Ջեբալից, Ֆարսից, Խուզիստանից և այլ շրջաննե-

25 ՀՊԹ, № 7200—7728—8274—8302։
26 Նույն տեղում, № 17749—17758։

լրից Հայաստան բերված արծաթ դրամների հետ առևտրի պահանջները սպասարկել են նաև բուն Հայաստանի ու Աղվանքի վաճառաշահ քաղաքներում թողարկված աբբասյան արծաթ դրամները։ Հայտնաբերված դրամական դանձերը պարզորոշ արտացոլում են նախ և առաջ Իրաքի և Իրանի կապը Հայաստանի հետ աբբասյան դրամների շրջանառության ոլորտում։ Հայաստանում IX դարում տարածված աբբասյան արծաթե դրամները գերազանցապես խալիֆայության արաբական (Իրաք, Սիրիա, Ջազիրա) և Իրանական (Ջեբալ, Ֆարս, Խուզիստան, Խորասան) երկրամասերից բերված դիրհեմներ են եղել։

Ասիական երկրներից բերված աբբասյան դրամներից բացի, մինչև IX դարի 30-ական թթ. Հայաստանում, Աղվանքում և արևելյան Վրաստանում նկատելի տարածում են ունեցել նաև Միջերկրականի աֆրիկյան ափերից, մասնավորապես Թունիսից, Մարոկկոյից և Ալժիրից դուրս եկած իդրիսյան ու աղլաբասյան արծաթե դրամները, որոնք իրենց արաբատառ արձանագրություններով և արծաթի կշռային չափերով նման էին աբբասյան դիրհեմներին։ Սակայն արաբական աշխարհի աֆրիկյան կենտրոններում դրվագված արծաթե դրամների շրջանառությունը Հայաստանում և հարևան երկրներում դիտվում է կարճ ժամանակամիջոցում. արդեն IX դարի երկրորդ կեսին Միջերկրականի աֆրիկյան վաճառաշահ ալ-Աբբասիա, Իֆրիկիա, Վելիլա և Տուդղա քաղաքներում դրվագված արծաթե դրամների հոսքը դեպի Արևելք նվազում է, իսկ այդ դարի վերջին հայկական շուկաներում իդրիսյան և աղլաբյան դրամների առկայությունը աննկատելի է դառնում։ Դրամական շրջանառության մեջ այդ ժամանակներում բացահայտորեն տիրապետող էին մնացել աբբասյան արծաթե դրամները, որ թողարկվում էին ինչպես տեղում, հայկական ու աղվանական քաղաքներում, այնպես էլ Իրաքի, Սիրիայի, Ջազիրայի, Ջեբալի, Ֆարսի, Խուզիստանի և Խորասանի քաղաքներում։ Աբբասյան դրամների առավելությամբ է շարունակում զարգանալ դրամական շրջանառությունը Հայաստանում ոչ միայն IX դարի վերջին, այլև X դարի ողջ ընթացքում։

Կուր-արաքսյան միջագետքի դրամագիտական նյութը X դարի 30-ական թթ. սկսած արտացոլում է նաև ուրիշ փոփոխություններ, որոնք կատարվել էին Մերձավոր Արևելքի երկրներում։ Շրջանառության մեջ երևացել էին քաղաքական պատմության ասպարեզը մտած ֆեոդալական նոր տիրակալությունների արծաթե դրամները։ Երբեմնի հզոր Աբբասյանների իշխանության քայքայման հետևանքով նրա տիրակալության հսկայական տարածքի վրա առաջ էին եկել տարբեր անկախ ու կիսանկախ ամիրայություններ, որոնք նվաճել էին սեփական դրամ կտրելու իրավունք։ Այդ նոր պետությունների թողարկած դրամները թափանցել էին առևտրի հայկական, աղվանական ու վրացական շրջանները, ուր աբբասյան դրամների հետ միասին սպասարկում էին ապրանքափոխանակության պահանջները։ Այդ նոր, մեծ մասամբ իրանական ծագում ունեցող դինաստիաների դրամները քանակով շատ չէին և հայկական շուկաներում երբեմն հաղիվ էին նշմարելի դառնում աբբասյան դրամների հոծ զանգվածում։ Այդ տեսակետից ուշագրավ է Դվինում հայտնաբերված, X դարի առաջին կեսին վերաբերող արծաթե դրամների գանձը[27], որն ըստ դինաստիաների ներկայացնում է հետևյալ պատկերը. Աբբասյան-

27 Мушегян. էջ 139։

ներ՝ 19 դրամ, Սաջյաններ՝ 1 դրամ։ Այդ գանձի աբբասյան դրամների կեսից ավելին շրջանառության մեջ են մտել ալ-Մուկտադիր խալիֆայի (295—320—902—932) գահակալության տարիներին։ Մնացած դրամները մեկ-երկու օրինակներով վերաբերում են ալ-Մուտամիդ, ալ-Մուտադիտ, ալ-Մուկտաֆի, ալ-Կահիր և առ-Ռադի խալիֆաների տարիներին, ըստ որում գանձի դրամներից նորագույնը թողարկվել է հիջրայի 324 (935/36) թ.։ Նշանակում է X դարի առաջին կեսին ևս Հայաստանի դրամական տնտեսության մեջ բացահայտ առավելությունը պատկանել է աբբասյան դրամներին։ Սաջյան դինաստիան ներկայացված է հիջրայի 319 (931) տարեթվով, տեղում՝ Արմինիայում դրվագված, Յուսուֆ իբն Դիվդադի անվամբ ընդամենը մեկ հատ արծաթ դրամով։ Արտաքնապես չնչին թվացող, բայց բոլորովին նոր դինաստիայի թողարկած այս արծաթ դրամի առկայությունը նշում է այն փոփոխությունը, որ կատարվել էր դրամական շրջանառության մեջ։ Այս կարգի նոր դրամների մուտքը շրջանառության մեջ առավել նկատելի դիտվում է Վրացական ՍՍՀ Մարնեուլիի շրջանում գտնված դրամական գանձի պարունակությամբ[28]։ Այս գանձում հավաքված են ոչ միայն Աբբասյան, այլև Սաֆֆայան, Սամանյան, Բուվեյան, Սաջյան և այլ դինաստիաների արծաթե դրամները, որոնցից նորագույնը թողարկվել է հիջրայի 334 (945/46) թ.։ Դանձից պահպանված շուրջ 200 դրամների մեծ մասը դուրս է եկել Իրաքի (44,70%) և Ջազիրայի (24,20%) վաճառաշահ քաղաքներից։ Մնացած դրամները (մեկից վեց նմուշներով) ներկայացնում են Իրանի հարավ-արևմտյան (Ֆարս, Խուզիստան) և արևելյան (Խորասան) ու կենտրոնական մարզերում (Ջեբալ, Ադրբեջան), ինչպես նաև Հայաստանում և Վրաստանում թողարկված դրամները։

X դարի երկրորդ կեսին առավել լայն տարածում են ստանում Աբբասյաններից անկախություն նվաճած ֆեոդալական նոր իշխանությունների թողարկած դրամները։ Այդ մասին կարևոր տվյալներ են ներկայացնում երկու դրամական գանձեր, որոնք գտնվել են պատմական Աղվանքի հարավ-արևելքում։ Դրանցից մեկը բացվել է Ադրբեջանական ՍՍՀ Մասալիևի շրջանի Բամբաշի գյուղում, 1948 թ., հողային աշխատանքների ժամանակ։ Այդ գանձի 61 արծաթ դրամների շարքում նորագույնը կրում է իր վրա հիջրայի 342 (953) տարեթիվը[29]։ Աբբասյան դիրհեմներից բացի (մոտ 20%), գանձը պարունակում է Սամանյանների (8%), ադրբեջանական ամիրաների (5%), Թոխարստանի ամիրաների (5%) և Սաալուկյանների (1,60%) դիրհեմները։ Այս գանձի տվյալները թույլ են տալիս ենթադրելու, որ առանձին դեպքերում միջազգային առևտուրը կարող էր կուր-արաքսյան միջագետքի տնտեսական շրջանները բերել այդ ժամանակներում հզորացած, իրանական ծագում ունեցող ամիրայությունների արծաթե դրամները։ Ինչպես Սամանյան, այնպես էլ Բուվեհյան և այլ ամիրայությունների թողարկած արծաթե դրամները արտաքնապես շատ չէին տարբերվում աբբասյան դիրհեմներից։ Դրանք իրենց կշռային չափերով և արաբատառ արձանագրությունների ձևավորման տվյալ-

[28] Description d'une trouvaille de 200 dirhems koufiques, faite aux environs de Tiflis, en 1857, par M. Bartholomaei. Extraits du Bulletin Historico-Philologique l'Academie imperiale des Sciences de S.-Peterbourg. „Mélanges Asiatiques", 1857—1859, t. III, էջ 222—239.

[29] ГИМК, IX, № 2106.

ներով ներկայացնում են մահմեդական Արևելքում դրամագործության մեջ ընդունված հիմնական սկզբունքները։ Փոխվել էին իշխող դինաստիաները, սակայն ապրանքային արտադրության զարգացման պահանջով դրամների դրվագումը կատարվում էր Մերձավոր Արևելքի տնտեսական կյանքի գրեթե նույն կենտրոններում։ Միջազգային առևտրի նույն մայրուղիներով հայկական շուկաներն էին բերվում Իրաքի, Ջեբալի, Ֆարսի, Ջազիրայի, Խուզիստանի և այլ երկրամասերի վաճառաշահ քաղաքներում դրվագված արաբատառ քուֆի գրերով արծաթե դրամներ, որոնք աբբասյան դրամների հետ խառնված սպասարկում էին կովկասյան շուկաներում կատարվող ապրանքափոխանակության պահանջները։

Բամբաշիի գանձի դրամների վրա նշված են ոչ միայն Աբբասյան խալիֆաների, այլև իրանական ծագում ունեցող ամիրայությունների առանձին տիրակալների անունները, որոնք ըստ ժամանակագրության հետևյալներն են.

Աբբասյաններ

ալ-Մամուն (195—218=810—833)	1	դրամ
ալ-Մուտաղ (252—255=866—869)	2	»
ալ-Մուտադիդ (279—289=892—902)	5	»
ալ-Մուկտաֆի (289—295=902—908)	1	»
ալ-Մուկտադիր (295—320=908—932)	14	»
ալ-Կահիր (320—322=932—934)	1	»
ալ-Ռադի (322—329=934—940)	8	»

Սամանյաններ

Նասր իբն Ահմեդ (301—331=914—943)	5	դրամ

Բուվեհյաններ

Իմադ ադ-Դաուլա Ալի (322—338=934—949)	6	դրամ
Մուիզ ադ-Դաուլա Ահմեդ (334—356=945—967)	3	»
Ռուկն ադ-Դաուլա Հասան (335—366=946—977)	2	»
Ադուդ ադ-Դաուլա Ֆանա Խուսրաու (338—372=948—983)	1	»

Սաֆարյաններ

Մուհամեդ իբն Ալի (298—316=910—929)	1	դրամ

Ադրբեջանի ամիրաներ

Մուֆլիհ ալ-Յուսուֆի (319—321=931—933)	1	դրամ
Դայսամ իբն Իբրահիմ (325—341=937—953	2	»

Թոխարստանի ամիրաներ

Ահմեդ իբն Սախլ (304=916—917)	1	դրամ

Պատմական Աղվանքում գտնված, X դարի երրորդ քառորդին բնորոշ այս տվյալները հաստատվում են մեկ ուրիշ գանձի պարունակությամբ, որը նույնպես գտնվել է Ադրբեջանական ՍՍՀ Մասսալինի շրջանի Յաղ-Կիրագի

գյուղում, այսինքն պատմական Աղվանքում[30]։ Շուրջ 300 արծաթ դրամներից բաղկացած այդ երկրորդ գանձը ներկայացնում է X դարի 50-ական թթ. շրջանառության մեջ եղած դրամական միավորների հետևյալ հարաբերակցությունն ըստ դինաստիաների.

Սասանյան	4	դրամ	= 1,36%	Անդերաբի ամիր.	6	դրամ	= 2,03%
Օմայան	1	»	= 0,34%	Ադրբեջանի ամիր	5	»	= 1,70%
Աբբասյան	157	»	= 53,39%	Թաբարստանի ամ.	3	»	= 1,02%
Բուվեհյան	59	»	= 20,06%	Ումարայի ամիր.	2	»	= 0,34%
Սամանյան	31	»	= 10,54%	Վեջիհյաններ	1	»	= 0,34%
Համդանյան	11	»	= 3,74%	Սաֆֆարյան	1	»	= 0,34%
Բոլորովին մաշված	12	»	= 4,10%	Սալլարյան	1	»	= 0,34%

Առանձնացնելով հատուկենտ նմուշներով ինչպես հնուց մնացած (սասանյան, օմայան), այնպես էլ IX—X դդ. թողարկված, բայց տեղական շրջանառության համար ոչ բնորոշ (Ումարայի, Թաբարստանի, Օմանի) դրամները, մենք կունենանք գանձի հիմնական կազմը՝ աբբասյան, բուվեհյան, սամանյան և համդանյան դիրհեմներ, որոնք գործառական նշանակություն են ունեցել ապրանքափոխանակության պրոցեսում։ Ուշագրավ է, որ այս գանձի պարունակությամբ ևս ընդգծվում է աբբասյան դրամների առավելությունը (53,35%) շրջանառության մեջ X դարի երկրորդ կեսին[31]։ Եթե նկատի առնենք տվյալ գանձի դրամներից միայն այն 236 դիրհեմները, որոնց վրա ընթերցվում են նրանց ծագման տեղանունների վերաբերյալ արաբերեն արձանագրությունները և խմբավորենք այդպիսիներն ըստ երկրամասերի, ապա կարտացոլվեն Իրաքի, Ֆարսի, Ջազիրայի, Խորասանի, Ջեբալի, Հայաստանի, Աղվանքի և միջինասիական քաղաքների կապերը դրամական շրջանառության ոլորտում։ Սակայն այդ կապերը չեն կարող դիտվել ուղղակի գծերով, այլ առավելապես բազմաթիվ միջանկյալ փոխանցումների ձևով, միջազգային առևտրի ընդհանուր պրոցեսում։

Բացահայտ է այն իրողությունը, որ հայկական, աղվանական և վրացական շուկաներում եղած արաբատառ դրամների ողջ զանգվածը բաղկացած է հիմնականում Մերձավոր Արևելքի արաբական և իրանական երկրներում դրվագված արծաթե դրամներից, որոնք շրջանառության մեջ են եղել արտաքին ու ներքին առևտրում։ Բանձերը ցույց են տալիս, որ ի տարբերություն անցյալ ժամանակների, X դարի երկրորդ կեսին ակտիվացել էր իրանական քաղաքների դերը դրամների թողարկման գործում։ Ապրանքային արտադրության զարգացման և միջազգային փոխանակության աճող պահանջների համար իրանական ծագում ունեցող դինաստիաները ավելի շատ արծաթ դրամներ էին թողարկում, քան անցյալներում։ Այդ դինաստիաներից մասնավորապես Բուվեհյանները և Սամանյանները, հզորանալով, X դարում դարձել էին լայնածավալ Իրանի տիրակալները, որոնց հսկողության տակ էին անցել, մի կողմից, Պարսից ծոցից Ֆարս ու Խուզիստանի միջով դեպի

30 Նույն տեղում, № 2107։

31 Յաղ Կիրապի գյուղում գտնված գանձի նորագույն դրամը կրում է հիջրայի 342 (953/54) տարեթիվը։

արաբական երկրները, իսկ մյուս կողմից՝ Խորասանի վրայով դեպի Սիր-Դարյայի ու Ամու-Դարյայի վաճառաշահ քաղաքները տանող քարավանային առևտրի մայրուղիները։ Հետևաբար, պատահական չէ, որ X դարի երկրորդ կեսի գանձերում հանդես են գալիս Աբբասյաններից անկախություն նվաճած առանձին ֆեոդալական տիրակալությունների, մասնավորապես, Բուվեհյանների ու Սամանյանների արծաթ դրամները։ Գանձը նշում է նաև Անդերաբի և Ադրբեջանի ամիրաների թողարկած դրամական միավորների շրջանառությունը։ Սակայն հիշյալ ամիրայական դրամները, որոնք թափանցել են Աղվանքի հարավ-արևելյան շրջանները (մասնավորապես Կասպից ծովի մերձակա վայրերը), բուն Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերում (Այրարատ, Շիրակ, Վանանդ, Սյունիք, Լոռի) լայն տարածում չեն ունեցել։ Նույնը պետք է ասել գանձում եղած Թոխարստանի քաղաքներում թողարկված դրամների վերաբերյալ. դրանք Հայաստանում հազվագյուտ են և նրանց շրջանառությունը X դարի հայկական շուկաներում տևական ընթացք չի ունեցել։ Ինչ վերաբերում է Իրանի հյուսիսային նահանգներում, մասնավորապես Ադրբեջանում թողարկված Սաջյանների ու նրանց հաջորդների, ինչպես նաև Սալլարյանների դրամներին, ապա այդպիսիք ոչ միայն տարածման նշմարելի ընթացք են ունեցել Հայաստանում, այլև դրանցից շատերը հաճախ անգամ դրվագվել են հայկական քաղաքներում։

Այսպիսով, Անդրկովկասում հայտնաբերված, X դարին պատկանող դրամական գանձերի քննությունը ևս ցույց է տալիս, որ միջազգային առևտրի շնորհիվ հայկական քաղաքներում լայն տարածում են ունեցել Մերձավոր Արևելքի տարբեր երկրներում թողարկված աբբասյան արծաթե դրամները։ Վերջիններիս հետ միասին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան կողմերում շրջանառության մեջ են եղել Արևելյան խալիֆայությունից անկախություն նվաճած մի շարք նոր դինաստիաների, մասնավորապես Սաջյանների, նրանց հաջորդների և Սալլարյանների թողարկած արծաթե դրամները, իսկ հարավ-արևմուտքում՝ Բուվեհյանների, Համդանյանների և Մրվանյանների դրամները, որոնք աբբասյան դիրհեմների հոծ զանգվածին խառնված, գործառական նշանակություն են ունեցել արտաքին ու ներքին առևտրում։

Դրամական շրջանառության տվյալները, մասնավորապես, Արմինիա նահանգի հայկական, վրացական և աղվանական շուկաներում տարածված դրամների ու դրամական գանձերի քննության արդյունքները ուրվագծում են Հայաստանի միջազգային կապերի հետևյալ ուղղությունները VIII—X դդ.։

Ա. Հայաստանը կապված է եղել արաբական երկրների՝ Սիրիայի, Միջագետքի, Իրաքի և Միջերկրականի աֆրիկյան շուկաների հետ։ Այս ընդհանուր ուղղությունից Հայաստանում մասսայական տարածում են գտել Վասիտ, Դիմեշք, Կիննասերին, Մեդինատ աս-Սալամ, ալ-Քուֆա, ալ-Բասրա, Ռաս ալ-Այն, Մոսուլ, Նիսիբին, Հառռան, Աբբասիա և ուրիշ վաճառաշահ քաղաքներում դրվագված արծաթ դրամները։

Բ. Հայաստանը կապված է եղել նաև իրանական նահանգներ Ադրբեջանի, Ջեբալի, Խուզիստանի և Ֆարսի ապրանքափոխանակության կենտրոնների հետ։ Այս վերջիններից հայկական շուկաներում տարածում են գտել ալ-Մուհամմեդիա (Ռեյ), Իսպահան, Համադան, ալ-Ահվազ, Շիրազ, Ռամ-Հորմուզդ և այլ քաղաքներում դրվագված արաբատառ արծաթ դրամները։

Առնչությունների իրանական ոլորտից Հայաստան են թափանցել նաև Բաբարստանի, Խորասանի (Նիսաբուր, Հերաթ, Բալխ, Մերվ) և երբեմն Մավերաննահրի (Սամարքանդ, Բուխարա, աշ-Շաշ) քաղաքներում դրվագված արծաթե դրամները։

Արևելքի երկրների հետ Հայաստանի միջսղզային կապերի այս ուղղությունները դիտվում են առավելապես աբբասյան դրամների շրջանառության ներքին ոլորտի հետ կապված։ Արևելյան խալիֆայության քայքայման ժամանակներում, չնայած ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով առաջացած նոր տիրակալությունների կողմից մասսայաբար թողարկվող արծաթ դրամներին, միջազգային շուկայում առավելությունը շարունակում էր պատկանել աբբասյան դրամներին։ IX—X դդ. հզորացած նոր դինաստիաների թողարկած դրամները չփոխեցին Հայաստանի դրամական տնտեսությանը բնորոշ վիճակը։ Նրանք դրվագվում էին Աբբասյանների տիրակալության նախկին կենտրոններում և շրջանառության իրենց ընթացքով հաստատում են աբբասյան դրամների տվյալները Հայաստանի ապրանքադրամական կապերի հիմնական ուղղությունների մասին։

Ուշագրավ է, որ դրամագիտական տվյալներով ուրվագծվող Հայաստանի տնտեսական կապերի վերոհիշյալ ուղղությունների մասին հիշատակվում է նաև միջնադարի հայկական ուղեցույցներից մեկում[32]։ Դվին քաղաքից դեպի օտար երկրներ գնացող քարավանային առևտրի ճանապարհների մասին խոսելիս մատենագիրը նշում է, որ Դվինից Հայաստանի հարավային շրջաններով քարավանները հասնում էին Իրաք և ապա Քուֆա և Բասրա քաղաքներով մտնում Պարսից ծոցի առափնյա շուկաները։ Այդ նույն ուղեցույցի հաղորդմամբ քարավանները Հայաստանից անցնում էին նաև հարավ-արևմուտք, հասնում Մոսուլ, Դամասկոս, այնուհետև՝ Երուսաղեմ, իսկ Երուսաղեմից գնում էին Եգիպտոս ու դեպի «Անհայտ օվկիանոս»[33]։ Արևելյան ուղղությամբ հիշատակվում է Դվին—Պարտավ—Կասպից ծով ճանապարհը։ Հյուսիսային ուղղությամբ քարավանները Դվինից մեկնում էին Թիֆլիս և ապա՝ Սև ծովի շրջանները։

Բրաքում, Միջագետքում և Իրանում IX—X դդ. պատրաստված խեցեղեն առարկաների՝ Հայաստանում հայտնաբերված նմուշները նույնպես հաստատում են դրամագիտական նյութերի ցուցմունքները[34]։ Հայաստանում ապրանքային արտադրության զարգացման IX—X դդ. վիճակի մասին են վկայում Անի և Դվին քաղաքների պեղումներից ի հայտ եկած հարուստ նյութերը։ Հայկական ծագում ունեցող ապրանքների մասին հիացմունքով են ակնարկում արաբ մատենագիրները, մասնավորապես ալ-Իսթախրին[35], Իբն Հաու-

[32] «Գիրք աշխարհաց և առասպելարանութեանց, որ է Ազուէսագիրք, Յամսթելոտամում, ի թուոյ փրկչին 1668, էջ 65—69։ Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 143։

[33] Նույն տեղում, էջ 69։

[34] Б. Шелковников, Керамика и стекло из раскопок Двина, «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի», հատ. IV, Երևան, 1952, էջ 110—111։

[35] Ал-Истахрий. Из книги путей и царств. Перевод с арабского Н. Караулова. «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXIX. Тифлис, 1901, էջ 19, 21, 51։

կալը[36], ալ-Մուկադասին[37] և X դարի սպարսիկ անանուն մի աշխարհագիր, «ալ-Ալամ» գրքի հեղինակը[38]։ Միջազգային շուկայում լայն ճանաչում էին գտել հայկական գորգերը, բարձերը, ծածկոցները և հատկապես հայկական «որդան կարմիր» ներկը։ Կարելի է վկայակոչել հայկական ծագում ունեցող ոսկե, արծաթե առարկաներ, զարդարանքներ և արհեստագործության տարբեր արտադրանքներ, որոնք միջազգային առևտրով դուրս էին բերվել Հայաստանից և տարվել օտար երկրներ։ Քիչ չեն նաև պատմական վկայություններն օտար երկրներից Հայաստան բերված ապրանքների մասին։ Այդ ամենը լրացնում ու հաստատում է դրամական գանձերի ընձեռած տվյալները։

Բացի խալիֆայության երկրներից, ուր դրամները թողարկվել և ընդունվել են արաբական կշռային սիստեմի սկզբունքներով, Եվրոպայում գտնված դրամական գանձերը ևս որոշակիորեն ցույց են տալիս միջազգային առևտրի ոլորտում արևելյան երկրների, այդ թվում Հայաստանի կապը Արևմուտքի հետ։ Ապրանքային արտադրության զարգացման հետ կապված, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներից արծաթե դրամները մասսայական հոսանքով անցնում էին Եվրոպայի արևելյան և հյուսիսային շրջանները։ Դրանք արաբական խալիֆայության ժամանակներում թողարկված օմայան և աբբասյան դիրհեմներն էին, որոնց միջազգային առևտուրը դուրս էր բերում շրջանառության ներքին ոլորտից և տարբեր ուղղություններով մղում եվրոպական երկրները։ Օմայան ու աբբասյան արծաթե դրամներից բացի այդ հոսանքին հետագայում խառնվեցին նաև խալիֆայության հսկայական տարածքի վրա առաջացած արևելյան տարբեր ամիրայությունների՝ Սաֆֆարյանների, Զիարյանների, Սամանյանների, Սաջյանների, Սալլարյանների, Բուվեհյանների, Համդանյանների, Մրվանյանների և այլոց դրամները։ Շուրջ 200 տարի (800—1025) արծաթե դրամների՝ արևելքից արևմուտք անցնող այդ հոսանքի հետ Եվրոպայի արևելյան ու հյուսիսային շրջաններն էին անցնում նաև Հայաստանում և Աղվանքում թողարկված արծաթե դրամները։ Միջազգային շուկայում գործառական նշանակություն ունեին առավելապես արծաթե դրամները, ոսկին այդ ժամանակներում համեմատաբար քիչ էր հանդես գալիս։ Հայաստանում և Աղվանքում թողարկված արաբատառ արծաթ դրամների բազմաթիվ օրինակներ են հայտնաբերվել եվրոպական գանձերի կազմում։ Դրանք ի հայտ են եկել ոչ միայն կենտրոնական Ռուսաստանում, այլև Մերձբալթյան երկրներում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Լեհաստանում, Գոտլանդ կղզում, Դանիայում, Գերմանիայի ծովամերձ շրջաններում և այլուր։ Քննությունները ցույց են տվել, որ գերմանական ու սլավոնական շրջաններում հայտնաբերված IX—X դդ. գանձերի մեջ հաճախ են գտնվել Արմինիա, Առռան, երբեմն նույնիսկ Մաադեն Բաջունայս, Հարունիա, Հարունաբադ, ալ-Բաբ,

---

36 Ибн-Хаукаль, Из книги путей и царств. Перевод с арабского Н. А. Караулова. «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXXVIII, Тифлис, 1908, էջ 92—95։

37 Ал-Мукаддасий, Из книги «Лучшее из делений для познания климатов». Перевод с арабского Н. А. Караулова. «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXXVIII, Тифлис, 1908, էջ 9—10։

38 Hudud al-Alam, The Regions of the World. A persian geography 372 a. h.—982 a. d. Transl. and explained by V. V. Barthold, London, 1937, էջ 142—145։

Դեբիլ, Թիֆլիս, Նիսիբին փողերանոցների արաբատառ անունների հիշատակությամբ արծաթ դրամները։

Միջազգային առևտուրն արաբատառ արծաթ դրամները շրջանառության ընդհանուր հոսանքով Եվրոպա էր տանում երեք հիմնական ուղղություններով։ Դրանցից առաջինը սկսվում էր Իրաքից, Սիրիայից ու Միջագետքից, ձգվում դեպի Հայաստան և Աղվանքի վրայով ու Կասպից ծովով անցնում Հյուսիս՝ Վոլգայի ավազանը։ Մերձվոլգյան շրջաններում այդ հոսանքը բաժանվում էր երկու ճյուղի, որոնցից մեկը ուղղվում էր դեպի մերձբալթյան երկրներ ու Գոտլանդի վրայով հասնում Սկանդինավիա, իսկ մյուսը թեքվում էր Արևմուտք և Դնեպր-Վիսլա սիստեմով մտնում առևտրի սլավոնա-գերմանական շուկաները։ Երկրորդ հոսանքը գալիս էր Իրանի տարբեր մարզերից և ձգվում դեպի Դերբենդ (ալ-Բաբ) ու Կասպից ծովից Վոլգայով անցնում Դոնի ավազանը, ապա՝ Մերձդնեպրյան շրջանը և շարունակում ընթանալ դեպի հյուսիս։ Երրորդ ուղղությամբ արաբական դրամները Իրանի հարավային երկրամասերից, Հայաստանից ու Միջագետքից ձգվում էին դեպի Փոքր Ասիա և Սև ծովի վրայով մտնում Դնեպրի ավազանը, ուր միանում էին առաջին և երկրորդ հոսանքներին։ Սակայն բացառված չէ, որ առանձին դեպքերում հայկական քաղաքներում թողարկված արծաթե դրամները կարող էին անցնել Մերձվոլգյան ու Մերձդնեպրյան շրջանները և այնուհետև թափանցել Եվրոպայի հյուսիս-արևելյան երկրամասերը տնտեսական կապերի անմիջական ընթացքով։ Հայ վաճառականներին հայտնի էին Վոլգայով դեպի Խազարական թագավորությունը տանող ճանապարհները[39]։ Դեռևս IX դարի կեսերին արաբներից հալածված հայերը օգնության նպատակով դիմել էին խազարներին և Վոլգայի բուլղարներին[40]։ Մերձվոլգյան շրջանների հետ Հայաստանի ունեցած տնտեսական առնչությունների մասին հիշատակում է X դարի արաբ ճանապարհորդ Իբն-Ֆադլանը։ Նա հաղորդում է, որ Վոլգայի բուլղարական թագավորի պալատը զարդարված է եղել հայկական ծագում ունեցող գորգերով[41]։ Հնագիտական պեղումները ցույց տվեցին, որ Մերձվոլգյան շրջաններում X դարում գոյություն են ունեցել հայկական գաղթավայրեր[42], որոնց մասին պահպանվել են նաև մատենագրական հիշատակություններ[43]։ Հայկական հուշարձաններ են հայտնաբերվել ոչ միայն Բուլղար քաղաքում, այլև Վոլգայի ավազանի շատ ուրիշ վայրերում[44]։ Բուլղարի հայկական գաղութի միջնաբերդից գտնված զարդարանքի ու գործվածքի մնացորդները կապվում

---

[39] С. Т. Еремян, Армения, армянское купечество и развитие торговли между Европой и Азией до XIX в., М., 1970, էջ 10—11։ М. Бережков, О торговле Руси с Ганзой до конца XIV в., СПб., 1879, էջ 18։

[40] В. В. Бартольд, Арабские известия о русах, «Советское востоковедение», М.—Л., 1940, I, էջ 18։

[41] «Путешествие Ибн-Фадлана на Волгу». Перевод Ковалевского, под редакцией И. Ю. Крачковского, М.—Л., 1939, էջ 73։

[42] А. П. Смирнов, Волжские болгары, «Труды Государственного исторического музея», вып. 19, М., 1951, էջ 256։

[43] Л. Меликсет-Бек, Древняя Русь и Армения, «ՀՍՍՀ ԳԱ Մատի անվան լեզվի ինստիտուտի աշխատությունների ժողովածու», Երևան, 1946, էջ 137—142։

[44] Б. В. Миллер, Об армянских надписях в Болгарах и Казани, «Известия Российской Академии института материальной культуры», т. IV, Л., 1925, էջ 66—80։

են Դվինի պեղումներից ի հայտ եկած նյութերի հետ[45]։ Վոլգայի բուլղարական շրջանների միջով էին անցնում տարանցիկ առևտրի այն գլխավոր ուղիները, որոնք սլավոնական շուկաները կապում էին Արևելքի հետ[46]։ Այդ ճանապարհներով զարգացող առևտրում գործոն դեր է խաղացել հայ վաճառականությունը և պատահական չէ, որ Իրանից ու Հայաստանից դեպի Կասպից ծով և ապա մերձվոլգյան շրջաններով մինչև Սպիտակ ծով հասնող քարավանային առևտրի ճանապարհը XI դարի վերջից հայտնի է եղել «Մեծ հայկական ճանապարհ» անունով[47]։ Հայտնաբերված դրամական գանձերը նշում են կապերի այդ ուղղությունները։

Հարց է առաջ գալիս, թե ե՞րբ էր սկսվել արաբատառ դրամների հոսանքը դեպի Եվրոպա։ Քննությունները ցույց են տալիս, որ օմայան և աբբասյան արծաթ դրամները Եվրոպայի սլավոնական և գերմանական շուկաներում երևվացել են ոչ շուտ, քան VIII դարի վերջին կամ IX դարի առաջին տարիներին[48]։ Հետագայում արևելյան արծաթ դրամների հոսանքը դեպի Եվրոպա դիտվում է մի քանի ելևէջներով և սպառվում է XI դարի առաջին տարիներին[49]։ Արծաթի սղությունը, որ ծայր էր առել Միջին Ասիայում և այնուհետև տարածվել մի շարք արևելյան երկրներում (մասնավորապես Իրանի, Իրաքի, Սիրիայի, Հայաստանի և հարևան երկրների արծաթագործության մեջ), չէր կարող չարտացոլվել միջազգային ապրանքադրամական հարաբերություններում։ Արևելքում արծաթի այսպես կոչված «ճգնաժամի» հարցը քննության ենթակա առանձին խնդիր է։

КЛАДЫ ВОСТОЧНЫХ МОНЕТ И ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ АРМЕНИИ В VIII—X ВЕКАХ

Доктор историч. наук Х. А. МУШЕГЯН

(Резюме)

Изучение состава куфических монетных кладов VIII—X вв. позволяет судить об основных направлениях товаро-денежных связей Армении рассматриваемого периода. Так, выясняется, что ведущие экономические центры Армении имели непосредственные связи с городами Кавказской Албании. Об этом свидетельствуют находки в Армении медных куфических монет, выпущенных в Арране, в городах Берда'а и ал-Пазидия. Кроме того, существовали связи Армении с различными областями Арабского халифата, на что указывают омайадские и особенно

---

45 А. П. Смирнов, Армянская колония в г. Болгары. Тезисы доклада, прочитанного на конференции по археологии Кавказа в Ереване. 25 октября 1956 г.

46 В. Л. Янин, Нумизматика и проблемы товаро-денежного обращения в Древней Руси, «Вопросы истории», 1955, № 8, էջ 137։

47 Л. М. Меликсет-Бек, նշվ. աշխ., էջ 137—142; С. Т. Еремян, նշվ. աշխ., էջ 10։

48 Р. Р. Фасмер, Завалишинский клад куфических монет VIII — X вв., «Известия ГАИМК», т. VII, вып. II, Л., 1931, էջ 12—13։

49 В. Л. Янин, Денежно-весовые системы домонгольской Руси. (Автореферат диссертации), М., 1954, էջ 7։

аббасидские серебряные монеты. Последние имели массовое распространение в Армении. Наиболее часто встречаются дирхемы, чеканенные в городах Сирии, Ирака и, изредка, северных берегов Африки (Димешк, Киннесрин, Васит, Мединат ас-Салам, ал-Куфа, ал-Басра, ал-Аббасия и др.). Нумизматический материал одновременно отражает связи Армении с иранскими областями — Азербайджаном, Джебалом, Хузистаном, Фарсом, Хорасаном и др.

На армянских рынках обращались куфические дирхемы различных городов Ирана (ал-Мухаммедия, Исфахан, Нишапур, ал-Ахваз, Шираз, Балх, Самарканд и др.). Международные связи Армении с арабскими и иранскими областями наиболее ярко показывает сфера обращения аббасидских дирхемов, имевших в то время широкое распространение на мировом рынке. Данные монетных кладов говорят о проникновении в IX—X вв. куфических дирхемов из городов Армении и Аррана на рынки восточнославянского мира, а через последний — в северо-восточные края Западной Европы.